

1

Յուդա, Յիսուս Զրիստոսի ՝Ժառան ու Յակոբոսի եղբայրը, անոնց՝ որ Հայր Աստուծով սրբացած, Յիսուս Զրիստոսով պահուած ու կանչուած են. 2 ողորմութիւն, խաղաղութիւն եւ սէր թող շատնան ձեր վրայ:

3 Սիրելիներ, երբ ամբողջ փութաջանութեամբ կը գրէի ձեզի հասարակաց փրկութեան համար, հարկաւոր **Սկասեցի** գրել ձեզի եւ յորդորել՝ որպէսզի պայքարիք այն հաւատքին համար, որ մէկ անգամ անանդունեցաւ սուրբերուն: 4 Որովհետեւ քանի մը մարդիկ – ՞որոնց դատապարտութիւնը վաղուց արձանագրուած է՝ – գաղտնի մտան **ձեր մէջ**, ամբարիշտներ՝ որոնք մեր Աստուծոյն շնորհքը այլափոխեցին ցոփութեան, եւ ուրացան միակ ՝Տիրակալն ու մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոսը:

ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

5 Ուրեմն կը փափաքիմ յիշեցնել ձեզի, թէպէտ ժամանակին գիտէիք ասիկա, թէ Տէրը՝ որ փրկեց ժողովուրդը Եգիպտոսի երկրէն՝ երկրորդ անգամ կորսնցուց չհաւատացողները. 6 եւ այն հրեշտակները, որոնք չպահեցին իրենց ՝սկզբնական դիրքը՝, հապա ձգեցին իրենց բնակութիւնը, յաւերժական կապերով վերապահեց մեծ օրուան դատաստանին համար՝ մթութեան մէջ: 7 Նմանապէս Սողոմ ու Գոմոր, ինչպէս նաեւ անոնց շուրջը եղած քաղաքները, որոնք անձնատուր եղան պոռնկութեան եւ ընթացան ուրիշ մարմինի տուէն, իբր օրինակ դրուած են **մեր** առջեւ, կրելով յաւիտենական կրակին վճիռը: 8 Նմանապէս այս ցնորածներն ալ կը պղծեն մարմինը, կ'անարգեն տէրութիւնը ու կը հայհոյեն փառքերը: 9 Բայց Միքայել հրեշտակապետը, երբ կը վիճէր Չարախօսին հետ՝ խօսելով Մովսէսի մարմինին մասին, չյանդգնեցաւ հայհոյալից ՝դատավճիռ արձակել՝ **անոր** դէմ, հապա ըսաւ. «Տէրը յանդիմանէ քեզ»: 10 Մինչդեռ ասոնք կը հայհոյեն այն բաները՝ որ չեն գիտեր. իսկ ինչ որ գիտեն բնականաբար, անբան կենդանիներու պէս, կ'ապականին այդ բաներուն մէջ: 11 Վա՛յ անոնց, քանի որ գացին Կայէնի ճամբայէն, ինկան Բաղաամի մոլորութեան մէջ՝ վարձքի համար, եւ կորսուեցան Կորխի հակաճառութեամբ: 12 Ասոնք բիծեր են ձեր սիրոյ խնճոյքներուն մէջ, երբ խրախճանք կ'ընեն ձեզի հետ, իրենք զիրենք արածելով առանց վախի: Անջուր ամպեր **են՝** հովերէն քշուած, աշնանային խամրած պտուղով ծառեր, անպտուղ, երկու անգամ մեռած, արմատախիլ եղած. 13 Ծովու վայրագ ալիքներ, որ կը փրփրցնեն իրենց ամօթը. մոլորած աստղեր, որոնց համար վերապահուած է խաւարին մթութիւնը յաւիտեան:

14 Ենովք ալ, եօթներորդը Ադամէն **ետք**, մարգարէացաւ ասոնց համար եւ ըսաւ. «Ահա՛ Տէրը կու գայ իր բիւրաւոր սուրբերով՝ 15 դատաստան կիրարկելու բոլորին հանդէպ, ու կշտամբելու անոնց մէջ **եղող** բոլոր ամբարիշտները՝ իրենց ամբարշտութեամբ ըրած բոլոր ամբարիշտ գործերուն համար, եւ բոլոր խիստ **խօսքերուն** համար՝ որ ամբարիշտ

<sup>u</sup> Կամ՝ ստրուկը

<sup>p</sup> **Յուն.**՝ որոնք վաղուց նախապէս արձանագրուած են այս դատաստանին համար

<sup>q</sup> **Ոմանք՝** Տիրակալ Աստուածն

<sup>r</sup> **Յուն.**՝ սկիզբը

<sup>t</sup> **Յուն.**՝ դատաստան բերել

## ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

մեղաւորները խօսեցան անոր դէմ»։ **16** Ասոնք տրտնջողներ **ու** քրթմնջողներ են, որոնք կ'ընթանան իրենց ցանկութիւններուն համաձայն. իրենց բերանները կը խօսին յոխորտաբանութիւններ, ու <sup>9</sup>երեսպաշտութիւն կ'ընեն օգուտի համար:

### ԶԳՈՒՇԱՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՅՈՐԴՈՐՆԵՐ

**17** Բայց դո՛ւք, սիրելիներ՛, յիշեցէ՛ք այն խօսքերը՝ որ նախապէս ըսուեցան մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի առաքեալներուն կողմէ: **18** Անոնք կ'ըսէին ձեզի թէ «վերջին ժամանակը ծաղրողներ պիտի ըլլան, որոնք պիտի ընթանան իրենց ամբարիշտ ցանկութիւններուն համաձայն»:

**19** Ասոնք՝ իրենք զիրենք զատող, շնչաւոր **մարդիկ** են, որոնք չունին Հոգին: **20** Իսկ դո՛ւք, սիրելիներ՛, շինելով դուք ձեզ՝ ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, եւ աղօթելով Սուրբ Հոգիով, **21** պահեցէ՛ք դուք ձեզ Աստուծոյ սիրոյն մէջ, սպասելով մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի ողորմութեան՝ յաւիտենական կեանքի համար: **22** Կարեկցեցէ՛ք ոմանց՝ զատորոշելով. **23** իսկ փրկեցէ՛ք ուրիշները, վախով յափշտակելով **զանոնք** կրակէն, ատելով մարմինէն ապականած բաճկոնն ալ:

### ՕՐՇՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸ

**24** Անոր՝ որ կարող է զերծ պահել ձեզ անկումէ, եւ անարատ կեցնել իր փառքին առջեւ՝ ցնծութեամբ, **25** մեր Փրկիչին՝ միա՛կ <sup>է</sup>Աստուծոյ, (մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի միջոցով) փա՛ռք ու մեծափառութի՛ւն, զօրութի՛ւն եւ իշխանութի՛ւն (բոլոր դարերէն առաջ,) հիմա ու բոլոր դարերուն մէջ: Ամէն:

---

<sup>9</sup> **Յուն.**՝ երեսի սքանչացում

<sup>է</sup> **Ոմանք**՝ իմաստուն Աստուծոյ